ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի մայիսի 31-ի թիվ 1/509 Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 1/253 Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կարգում ներառված է ՀՀ ԿԲ նախագահի
11.09.2013թ. թիվ 1/795 Լ որոշմամբ կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման կարգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2006 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման կարգը» հաստատելու մասին» թիվ 1/253 Լ որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահի
2012 թվականի մայիսի 31-ի թիվ 1/509 Լ որոշմամբ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆՇՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վարկանշման գործընթացի նպատակը, վարկանշման հանձնաժողովի կազմը, գործունեության կարգը:

2. Կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման նպատակը վերջիններիս կողմից ներգրավված պարտավորությունների ժամանակին և ամբողջ ծավալով սպասարկելու (մարելու) ունակության՝ վարկունակության ներուժի վերաբերյալ օբյեկտիվ և անաչառ գնահատականի ներկայացումն է:

ԳԼՈՒԽ 2. ՎԱՐԿԱՆՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

3. Վարկանշման հետ կապված, այդ թվում՝ առևտրային կազմակերպությունների վարկանշման, վարկանիշի վերանայման, փոփոխման, ինչպես նաև դադարեցման հարցերի քննարկման նպատակով Կենտրոնական բանկում ստեղծվում է հանձնաժողով: Հանձնաժողովը նախագահում է Կենտրոնական բանկի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը:

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ: Վարկանիշի վերանայման հայտանիշի ի հայտ գալու դեպքում վարկանշման գործառույթ իրականացնող ստորաբաժանումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի նիստ գումարելու նպատակով

զեկուցագրով դիմում է հանձնաժողովի նախագահին: Նախագահը, դիմումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում գումարում է հանձնաժողովի նիստ:Նիստի անցկացման ժամկետի և օրակարգի մասին առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի նիստերն արձանագրողը տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը կամ նախագահի տեղակալը:

Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են Կենտրոնական բանկի աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակցի կողմից: Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի՝ տվյալ նիստին մասնակցած բոլոր անդամները: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի օրվան հաջորդող երկու օրվա ընթացքում:

7. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ եզրակացությունը կայացվում է հանձնաժողովի նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահողի ձայնը որոշիչ է:

8. Հանձնաժողովում քննարկված առևտրային կազմակերպությունների վարկանշման, վարկանիշի փոփոխման կամ դադարեցման հարցերի քննարկման արդյունքներով Կենտրոնական բանկի նախագահն ընդունում է որոշում:

ԳԼՈՒԽ 3. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆՇՈՒՄԸ

9. Վարկանշումն իրականացվում է Կենտրոնական բանկի կամ առևտրային կազմակերպության նախաձեռնությամբ՝ միայն առևտրային կազմակերպության համաձայնության դեպքում:

10. Կենտրոնական բանկը վարկանշում է այն առևտրային կազմակերպությունները, որոնց տարեկան հասույթը գերազանցում է հարյուր միլիոն դրամը, գործում են առնվազն երեք տարի կամ հանդիսանում են երեք և ավել տարի գործունեություն ծավալած ընկերության իրավահաջորդ և առնվազն վերջին տարվա ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են աուդիտի արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից: Ընդ որում, եթե արտաքին աուդիտորը հրաժարվել է կարծիք արտահայտելուց կամ եզրակացությունը բացասական է, ապա այդ կազմակերպությանը չի կարող շնորհվել ներդրումային վարկանիշ:

11. Վարկանշման գործընթացին մասնակցելու համար առևտրային կազմակերպությունը Կենտրոնական բանկին տրամադրում է հետևյալ փաստաթղթերը՝

1) Հաշվետու տարվա և դրան նախորդող երկու տարիների ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունը և դրան կից ֆինանսական հաշվետվությունները և ծանոթագրությունները:

2) Եթե հաշվետու տարվան նախորդող երկու տարիների ֆինանսական հաշվետվությունները չեն ենթարկվել աուդիտորական ստուգման արտաքին աուդիտորի կողմից, ապա հաշվետու տարվա համար ներկայացվում է ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունը և դրան կից ֆինանսական հաշվետվությունները և ծանոթագրությունները, իսկ դրան նախորդող երկու տարիների համար՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները

3) Լրացված ֆինանսական կանխատեսման և որակական գնահատման հարցաշարերը:

4) Կենտրոնական բանկի հարցազրուցավարի կողմից պահանջվող այլ տեղեկություններ:

5) Եթե նկատվել է որևէ նշանակալի փոփոխություն առևտրային կազմակերպության տնտեսությունում, գործունեության ոլորտում կամ ներքին միջավայրում, որը կարող է ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության վրա, ապա Կենտրոնական բանկի վարկանշման հանձնաժողովի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ:

12. Առևտրային կազմակերպությունների վարկանշումն իրականացվում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 2012թ-ի մայիսի 31-ի թիվ 1/510Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման մեթոդաբանությանը» (այսուհետ՝ վարկանշման մեթոդաբանություն) համապատասխան, որը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային էջում: Ընդ որում, վարկանշվող առևտրային կազմակերպությունների վերավարկանշումն իրականացվում է առնվազն տարին մեկ անգամ:

13. Առևտրային կազմակերպությունների վարկանշումը կարող է դադարեցվել՝

1) կազմակերպության ցանկությամբ,

2) եթե վարկանշված առևտրային կազմակերպությունը չի տրամադրում սույն կարգի 11-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ու այլ տեղեկությունները,

3) եթե ընկերությունը այլևս չի բավարարում սույն կարգի 10-րդ կետի պահանջներին,

4) եթե ընկերությունն ունի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214 Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն կասկածելի կամ անհուսալի դասակարգված պարտավորություններ:

14. Սույն կարգի 13-րդ կետով սահմանված դեպքերից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում Կենտրոնական բանկը կարող է դադարեցնել տվյալ կազմակերպության վարկանշումը և այդ մասին տեղեկատվությունը հրապարակում է ինտերնետում՝ Կենտրոնական բանկի տնային էջում:

15. Առևտրային կազմակերպությունների վարկանշի, վարկանիշի փոփոխման կամ դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտն ուժի մեջ է մտնում ինտերնետում՝ Կենտրոնական բանկի տնային էջում հրապարակելու պահից:

16. Վարկանիշը շնորհվում է հայկական այբուբենի տառերով, ընդ որում՝ առավելագույն վարկանիշ է հանդիսանում Ա+ վարկանիշը, իսկ նվազագույն՝ Զ վարկանիշը:

17. Վարկանիշերի մեկնաբանությունն է.

1) Ա խմբի վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունն ունի չափազանց մեծ հնարավորություն ֆինանսական պարտավորությունները մարելու, սպասարկելու, վարկային ռիսկի նվազագույն մակարդակով:
2) Բ խմբի վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունն ունի շատ մեծ հնարավորություն ֆինանսական պարտավորությունները մարելու, սպասարկելու, վարկային ռիսկի շատ ցածր մակարդակով:
3) Գ խմբի վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունն ունի մեծ հնարավորություն ֆինանսական պարտավորությունները մարելու, սպասարկելու, վարկային ռիսկի ցածր մակարդակով:
4) Դ խմբի վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունն ունի բավարար հնարավորություն ֆինանսական պարտավորությունները մարելու, սպասարկելու, վարկային ռիսկի միջին մակարդակով:

5) Ե խմբի վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունն ունի անբավարար հնարավորություն ֆինանսական պարտավորությունները մարելու, սպասարկելու, վարկային ռիսկի բարձր մակարդակով:
6) Զ վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունը չունի հնարավորություն ֆինանսական պարտավորությունները մարելու, սպասարկելու, վարկային ռիսկի շատ բարձր մակարդակով:

18. Վարկանիշերը իրենց հերթին կարող են ճշգրտվել «+» և «-» նշաններով, որտեղ «+» նշանը նշանակում է, որ առևտրային կազմակերպությունը տվյալ վարկանիշի սահմաններում ունի միջինի նկատմամբ համեմատաբար բարձր գնահատական, իսկ «-» նշանը՝ որ առևտրային կազմակերպությունը տվյալ վարկանիշի սահմաններում ունի միջինի նկատմամբ համեմատաբար ցածր գնահատական:

19. Ընկերության վարկանիշը որոշվում է՝ ելնելով վարկանշման մեթոդաբանությամբ հաշվարկված վարկանշման գնահատականից՝ համաձայն սույն կարգի 20-րդ կետում սահմանված սանդղակի: Ընդ որում «Բ –» և դրանից բարձր վարկանիշ շնորհելու համար պարտադիր է, որպեսզի ընկերության ֆինանսական հաշվետվությունները աուդիտի ենթարկվեն միջազգային ճանաչում ունեցող և http://www.accountancyage.com, http://accountants.entrepreneur.com կամ http://www.vault.com կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններից որևէ մեկի կողմից, տրված լինի դրական եզրակացություն և Կենտրոնական բանկին ներկայացվեն աուդիտի եզրակացությունը և դրան կից ֆինանսական հաշվետվությունները և ծանոթագրությունները:

20. Առևտրային կազմակերպության վարկանշումն իրականացվում է՝ համաձայն հետևյալ սանդղակի.

Վարկանշման գնահատական	Վարկանիշ
4.77 և բարձր	Ա +
4.55 – 4.76	Ա
4.33 – 4.54	Ա -
4.11 – 4.32	Բ +
3.89 – 4.10	Բ
3.67 – 3.88	Բ -
3.45 – 3.66	Գ +
3.23 – 3.44	Գ
3.01 – 3.22	Գ -
2.84 – 3.00	Դ +
2.67 – 2.83	Դ
2.51 – 2.66	Դ -
2.34 – 2.50	Ե +
2.17 – 2.33	Ե
2.00 – 2.16	Ե -
1.99 և ցածր	Զ